Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում
գործող ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
(ԲԿԳԿ) իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
Հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123

# ԿԱՐԾԻՔ
# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԿԱՐԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

**ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արամ Վիլենի Ղահրամանյանի՝ «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրներին:

Յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացումը ենթադրում է խոշոր, միջին և փոքր ձեռնարկատիրության ծավալների ճիշտ փոխհարաբերակցություն և կայուն զարգացում՝ բարեխիղճ մրցակցության պայմաններում: Հանդիսանալով շուկայական կառուցակարգի առանցքային տարրերից մեկը՝ ձեռնարկատիրական գործունեությունն էական դեր է խաղում տնտեսության կայուն զարգացումն ապահովելու գործում: Ներկայումս ձեռնարկատիրության ոչ բավարար վիճակը մեր երկրում պայմանավորված է ոչ միայն տնտեսական պատճառներով, այլև նրանով, որ ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական բազան դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Գործող օրենսդրությունը չի կարգավորում նշված ոլորտին վերաբերող մի շարք խնդիրներ և

արդյունավետ չէ: Ակնհայտ է, որ ձեռնարկատիրական հարաբերությունների հետագա զարգացումը մեր երկրում անհնար է առանց արդյունավետ նորմատիվ բազայի:

Համաշխարհային տնտեսության զարգացումն ու միջազգային տնտեսական հարաբերությունների գլոբալիզացիան պայմանավորում են նաև այնպիսի ներդրումային պայմանագրի իրավական հիմքերի հետազոտման արդիականությունը, ինչպիսին է լիզինգը, որը ներդրումային գործունեության իրականացման իրավական ձև է: Լիզինգային գործառնությունների իրավական կարգավորման ոլորտն առանձնանում է նրանով, որը ընդգրկում է տվյալ իրավահարաբերությունների բարդ բովանդակությունն ու հատուկ կառուցվածքը, ինչպես նաև դրանում մասնակցող սուբյեկտների յուրահատկությունը:

Աշխատանքի արդիականությունը կասկած չի հարուցում ու նաև պայմանավորված է լիզինգի ինստիտուտի ոչ բավարար օրենսդրական կարգավորմամբ՝ հատկապես հաշվի առնելով հայրենական իրավագիտության մեջ թեմայի ոչ բավարար մշակվածության աստիճանը:

Հեղինակը հաջողությամբ լուծել է իր առջև դրված խնդիրներն ու հասել հետազոտության նպատակներին: Հեղինակին հաջողվել է բավականին ամբողջական ու ճիշտ կերպով հետազոտել թեման, ինքնուրույն ձևակերպել սեփական մոտեցումներն աշխատանքում: Առանձնացվել ու հանգամանալից վերլուծության են ենթարկվել լիզինգային իրավահարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման թերությունները, բացերն ու հիմնախնդիրները մեր երկրում, ինչպես նաև առաջարկվել են լուծման տարբերակներ: Աշխատանքում ներկայացված գաղափարները բավականին հիմնավորված են և պարունակում են գիտական նորույթ: Ատենախոսը նաև մշակել է առաջարկություններ լիզինգային հարաբերություններից բխող վեճերը լուծելու համար:

Աշխատանքում լայնորեն կիրառվել են ընդհանուր գիտական ու զուտ իրավագիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդներ:

Ուշագրավ են հեղինակի կողմից կատարված դիտողություններն ու առաջարկությունները, որոնք ուղղված են լիզինգային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման կատարելագործմանը մեր երկրում:

Մասնավորապես, քննության առարկա դարձնելով լիզինգային հարաբերությունների բնույթն ու նպատակները՝ հեղինակը տեղին է նկատում, որ անհրաժեշտ է դուրս բերել լիզինգի պայմանագիրը վարձակալության տեսակի իրավական ռեժիմից, իսկ լիզինգին վերաբերող դրույթները ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կարգավորել առանձին գլխում՝ որպես ֆինանսական ծառայությունների ոլորտում կնքվող առանձին տիպի պայմանագիր: Նշված առաջարկությանը համահունչ՝ հեղինակը հիմնավորում և առաջարկում է նաև լիզինգի պայմանագրի հասկացության նորովի սահմանում:

Հետաքրքրական է նաև ատենախոսի առաջարկությունը՝ որպես լիզինգի առարկա գույքը ձեռք բերելու պայմանագրային կառուցակարգ դիտարկել կապալի պայմանագիրը, ինչը հնարավորություն կտա գույքը պատրաստել լիզինգառուի պահանջմունքներին հնարավորինս համապատասխան, և որի արդյունքում կաճի լիզինգային շրջանառությունը մեր երկրում:

Ատենախոսությունը կարևորվում է նաև նրանով, որ հեղինակն անդրադարձ է կատարել լիզինգառուների իրավունքների ու շահերի պաշտպանության հիմնախնդիրներին և կատարել տեսագործնական բնույթի մի շարք առաջարկություններ:

Կարևոր ենք համարում նաև լիզինգի պայմանագրի էական պայմանների, լիզինգով տրամադրվող գույքի պահպանության և օգտագործման նկատմամբ հսկողություն և ստուգում իրականացնելու հարցերը մանրամասնորեն կանոնակարգելու, լիզինգառուի գործունեության նկատմամբ ֆինանսական հսկողությունը որոշակիացնելու, լիզինգի առարկա գույքը ձեռք բերելու հարցում լիզինգատուի պատասխանատվության սահմանները հստակեցնելու, լիզինգի պայմանագրի փոփոխման և լուծման վերաբերյալ հեղինակի դիտարկումներն ու առաջարկությունները:

Հետազոտության արժանիքներից է այն, որ հեղինակի կողմից ուսումնասիրվել է լայնածավալ տեսական գրականություն և նորմատիվ ու պրակտիկ նյութ, ինչը

նկատելիորեն բարձրացնում է աշխատանքի գիտագործնական արժեքը: Պետք է նշել նաև, որ աշխատանքում անդրադարձ է կատարվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլև լիզինգային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային իրավական ակտերին, ինչպես նաև մի շարք այլ երկրների կարգավորումներին, ինչն անկասկած ողջունելի է:

Միևնույն ժամանակ, ցանկանում ենք ատենախոսի ուշադրությունը հրավիրել աշխատանքում տեղ գտած որոշ թերությունների ու բացթողումների վրա.

1. Հեղինակը փաստում է, որ հայրենական պրակտիկայում լիզինգի պայմանագրերն ըստ էության նախատեսում են պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու ընթացակարգ լիզինգի պայմանագրի պայմանների գրեթե ցանկացած՝ անգամ չնչին խախտման դեպքում՝ լիզինգի պայմանագրի առարկա գույքի վերադարձմամբ, ինչը պարունակում է ռիսկեր՝ պայմանագրի լուծման արդյունքում շահավետ վիճակում հայտնվելու նպատակով լիզինգատուի՝ լիզինգի պայմանագրի լուծման իրավունքի չարաշահման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, սակայն, հեղինակն առաջարկում է հստակ ամրագրել լիզինգի պայմանագրից միակողմանի հրաժարվելու կողմերի իրավունքը, այսինքն՝ նախատեսել լիզինգային պարտավորությունների դադարման ոչ դատական կարգ: Կարծում ենք՝ գործող կարգավորման պայմաններում լիզինգի պայմանագրի լուծման դատական կարգի առավելությունն այս տեսանկյունից այն է, որ վերը նշված ռիսկերը նվազեցվում են, քանի որ դատարանն այս դեպքում գնահատում է՝ արդյո՞ք կողմի թույլ տված խախտումը տվյալ դեպքում էական է, թե ոչ, և արդյո՞ք այն բավարար է պայմանագիրը լուծելու համար:

2. Ատենախոսության 117-121-րդ էջերի ուսումնասիրությունից հետևում է, որ, ըստ հեղինակի, գույքը լիզինգառուին հանձնելուց հետո դրա տիրապետման ու օգտագործման իրավունքը դասական պարտավորական իրավունք չէ, իսկ լիզինգատուի իրավունքը լիարժեք սեփականության իրավունք չէ: Այնուհետև, պաշտպանության դրվող 8-րդ դրույթում լիզինգի պայմանագրի առարկայի նկատմամբ լիզինգառուի իրավունքների վերլուծության արդյունքում հեղինակն առաջարկում է որոշակիորեն սահմանափակել գույքի նկատմամբ տիտղոսային սեփականատեր հանդիսացող լիզինգատուի իրավունքները՝ նախատեսելով գույքը

տնօրինելիս լիզինգառուի համաձայնությունը ստանալու վերաբերյալ պահանջ: Կարծում ենք՝ նման առաջարկությունը խնդրահարույց է, քանի որ լիզինգատուների համար լիզինգի գրավչությունը նաև նրանում է, որ նրանք գույքը ձեռք են բերում սեփականության իրավունքի տիտղոսով, որը, ինչպես գիտենք, լիարժեք իրավունք է, մինչդեռ այդ պարագայում գույքը լիզինգով տրամադրելը կարող է դիտարկվել իբրև սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող որոշ իրավազորությունների սահմանափակում: Բացի այդ, սեփականատեր չհամարվող անձանց իրային իրավունքները սպառիչ կերպով ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասում: Այդ նորմում լիզինգի առարկայի տիրապետման ու օգտագործման իրավունքը նշված չէ, հետևաբար լիզինգառուի իրավունքների նման լայն մեկնաբանությունը կարող է անհամապատասխանությունների հանգեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և մասնավորապես նշված հոդվածով որդեգրված մոտեցման առումով:

3. Հեղինակը եզրահանգում է, որ ատենախոսությունում շարադրված առաջարկությունները կարող են լրիվությամբ կենսագործվել լիզինգային հարաբերությունները կարգավորող համապարփակ օրենսդրական ակտի՝ լիզինգի մասին առանձին օրենքի շրջանակներում, սակայն ցանկալի կլիներ ներկայացնել նման օրենսդրական ակտի կոնկրետ նախագիծ, որը կարտացոլեր նաև աշխատանքում կատարված կարևոր առաջարկություններն ու եզրահանգումները:

Այդուհանդերձ, վերը շարադրված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը: Աշխատանքը կատարված է դրան ներկայացվող ձևական ու բովանդակային պահանջների պահպանմամբ, ինքնատիպ է և հետաքրքիր: Հեղինակի կողմից պաշտպանության դրվող դրույթները տեսական ու գործնական տեսանկյունից հիմնավորված են և ինքնատիպ, ինչպես նաև հիմնականում արտացոլվել են հրապարակված թվով ութ գիտական հոդվածներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Արամ Ղահրամանյանի հեղինակած «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997

թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նախատեսված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու **Կ. Մ. Հովհաննիսյան**

26.05.2025թ.

Կ. Մ. Հովհաննիսյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Գիտական քարտուղար՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**
բ. գ. թ.